ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՍՏ «ԴՐՕՇԱԿ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ *

ՀՏԴ 94(479.25) *DOI: 10.52063/25792652-2024.1.20-51*

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի
հայոց պատմության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
karine.hovsepyan.1985@mail.ru
ORCID: 0009-0002-0019-6472

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում վերհանելու 1905 թ. հայ-թաթարական բախումների իրական ու խորքային պատճառները, հայերի ինքնապաշտպանության կազմակերպման հանգամանքներն ու բարդությունները ըստ «Դրօշակ» պարբերականի:

Աշխատանքի խնդիրը 1905թ. հայ-թաթարական բախումների իրական պատճառների, նրա կազմակերպիչ հիմնական ուժի՝ ցարական իշխանության գործադրած ջանքերի, ինչպես նաև Դաշնակցության կազմակերպած փայլուն ինքնապաշտպանության քննական վերլուծությունն է՝ հիմք ընդունելով «Դրօշակ» պարբերականի առատ տեղեկություններն ու դրանց համադրումը այլ հեղինակների աշխատությունների հետ:

Աշխատանքը շարադրված է փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական վերլուծության սկզբունքների կիրառմամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է պնդել, որ 1905-1906 թթ. ցարական կառավարության կողմից հրահրված հայ-թաթարական բախումները ունեին ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական դրդապատճառներ և հեռահար նպատակներ, սակայն Դաշնակցության կազմակերպած ինքնապաշտպանական ու կտրուկ հարձակողական ճիշտ գործողությունների շնորհիվ այդ բախումները մարեցին ամբողջ Կովկասի տարածքում: Անժխտելի փաստ է, որ ցարական կառավարությունը, հրահրելով ազգաամիջյան բախումներ Կովկասյան տարածաշրջանում, նպատակ էր հետապնդում նրանց հեռու պահել կայսրությանը պատուհասած հեղափոխական շարժումներից և հնարավորինս տնտեսական ու քաղաքական օգուտներ քաղել այդ ընդհարումներից: Սակայն այս բախումներում հայ ժողովրդին հաջողվում է հաղթանակած դուրս գալ, քանզի դիմադրության կազմակերպումն իր վրա է վերցնում Դաշնակցությունը, որը 1904 թ. «Կովկասյան ճակատ»-ի բացմամբ իր վրա վերցրեց նաև արևելահայության ինքնապաշտպանության գործը:

Հիմնաբառեր՝ *բախումներ, «Դրօշակ», դաշնակցական գործիչներ, Նիկոլ Դուման, Բաքու, ինքնապաշտպանություն, թաթար ամբոխ, ցարական կայսրություն:*

---

* Հոդվածը ներկայացվել է 05.03.2024թ., գրախոսվել՝ 16.04.2024թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2024թ.:

Նախաբան

19-րդ դարի վերջին ռուսական հսկայածավալ կայսրությունում բռնկվում են ժողովրդական ցույցեր ու գործադուլներ, որոնք վերածվում են զինված բախումների: Իսկ երբ 20-րդ դարի սկզբին ցարական կայսրությունն ավելի խստացրեց հայկական հալածանքները, երբ բռնագրավեց հայոց եկեղեցական գույքը և փակեց նրանց մշակութային-կրթական հաստատությունները, Դաշնակցությունը սկսեց զբաղվել նաև արևելահայության հարցով: 1904 թ.-ին այն ընդունեց իր «Կովկասյան նախագիծը», որով հայտարարում էր, թե ղեկավարելու է նաև արևելահայ բանվորական շարժումները (Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), 161): Չորմիսյանն այսպես է մեկնաբանում «Կովկասյան նախագիծը». «1.*Ռուսաստանի և մասնաւորաբար Կովկասի յեղափոխական շարժումները ստացել են անսպասելի լայն ծաւալ, 2. Բռնապետութիւնը թուլացեր է զգալապէս արտաքին թշնամի և յեղափոխական ընդդիմադիր տարրերու հարուածներուն տակ, 3.Կովկասը իր ձայնը պետք է բարձացնէ համայն Ռուսաստանի քաղաքական փոփոխություններու նախօրյակին*»: (Չորմիս Լ., Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, 525)

Այս համընդհանուր հեղափոխական թոհուբոհից Կովկասը հեռու պահելու համար Կայսրությունն այստեղ հրահրում է ազգամիջյան բախումներ:

Կայսրության ներքին կյանքում տեղի ունեցող երևույթները զուգորդվում են 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմով: Պատերազմում ցարական զորաբանակները մի շարք ճակատներում պարտություններ են կրում, ինչն ավելի է խորացնում հեղափոխական շարժումները, որոնք սպառնում են տարածվել նաև Անդրկովկասում: Ցարական Ռուսաստանը հայտնվում է ծայրագույն կացության մեջ:

Այս հեղափոխական համընդհանուր հորձանքից Անդրկովկասը հեռու պահելու նպատակով ցարական կառավարությունը դիմում է իրեն քաջածանութ և մինչև օրս լավագույնս աշխատող մեթոդի. հրահրում է ազգամիջյան բախումներ կովկասյան թուրքերի, կամ ինչպես ընդունված է ասել, թաթարների և հայերի միջև: Այս բախումներից, ըստ ծրագրի, պիտի անմասն չմնային նաև վրացիները:

Բախումներն ունեին, անշուշտ, տնտեսական, քաղաքական, կրոնական շարժառիթներ: Անդրկովկասյան թաթարների վերնախավը՝ կալվածատերեր, բեկեր, աղաներ, ավանդաբար պահպանելով իրենց առանձնաշնորհները, կենտրոնացած էին համառուսական և համաշխարհային նավթի կենտրոն Բաքվում: Երբ 1880-ականներից այստեղ հաստատված հայկական տարրը սկսում է առաջադիմել և հաջողությունների հասնել գիտության, մշակույթի և մանավանդ առևտրի և արդյունաբերության ոլորտում, դա խորապես բորբոքում է հետամնաց թաթար ազգաբնակչության նախանձն ու ատելությունը, որն առավել վառ էր արտահայտված հենց Բաքվում (Վարանդեան Մ., Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմություն, 297):

Պետք է նշել, որ առավել վտանգավոր տարրերից էին թաթար մոլեռանդ կղերականությունը, հակահայ գաղափարներով տոգորված թուրք մտավորականությունը, որոնք իրենց կարգախոսներն ու հրահանգները ստանում էին հեռավոր Ստամբուլից: 30 տարվա ընթացքում հայ տարրը ոչ միայն դիզեց պատկառելի հարստություն, այլ նաև մտավորականներով, ճարտարագետներով ու ամեն տեսակ մասնագետներով համալրեց նավթաշխարհը և տեր դարձավ առաջնակարգ պաշտոնների նավթարդյունաբերական բարձրագույն խորհրդում, Բորսայում և ուրիշ միջազգային հիմնարկություններում:

Այս հանգամանքները հետամնաց թաթարներին հնարավորություն չէին տալիս մրցակցելու հայ տարրի հետ, սակայն նրանք չէին կարող հանդուրժել թաթարական հայրենիքում հայերի փայլուն դիրքեր նվաճելը (Վարանդեան Մ., Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմություն, 299):

Ցարական իշխանության վարած քաղաքականությունը նրանց համար նպաստավոր առիթ էր հայկական տարրից ազատվելու համար:

Ահա այս նպատակով գրգռեցին Բաքվի թուրք ազգաբնակչությանը, իսկ ռուսական ոստիկանությունն ինքն էր զենք հայթայթում նրանց համար և կեղծ լուրեր տարածում, թե հայ կոմիտեները պատրաստվում են հարձակվել թուրքերի վրա:

1905 թ. հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց նախադեպը չունեցող այնպիսի իրադարձություններով, որոնք անակնկալ էին ոչ միայն բովանդակ հայության, այլև ազգային-ազատագրական պայքարն առաջնորդող ազգային-հեղափոխական կուսակցությունների համար (Գևորգյան Հ. Ազատագրական պայքարի ռազմավարությունը, 326):

Այս կոտորածները «Դրօշակ»-ը համարում է արևմտահայության կոտորածների օրգանական շարունակությունը և 1905 թ. փետրվարին հրատարակված «Կարմիր սուլթան-Կարմիր ցար» հոդվածով ներկայացնում է 2 բռնակալների հայատյացության նմանությունը. «Թեև տարբեր ծագումով, պատմությամբ, թեև շատ հեռու միմյանցից և շատ յաճախ նոյնիսկ «թշնամի» երկու բռնարանները՝ Պետերբուրգ և Կ. Պոլիս՝ նմանութեան հրաշալի ապացույցներ են տալիս խնկարկումն միապետության գահույքի առջև, անծայր թշնամանք ազատագրության կռվին, հալածանք հպատակ-ազգերի դեմ, կոտորած՝ Վան, Էրզրում, Ակն, Խարբերդ սուլթանական համիդիականների ձեռքով, կոտորած՝ Կիշինիով, Պետերբուրգ, Վարշավա, Լօձ, Բաքու ցարի կոզակների ձեռքով. մի տեղ Տրէպով, մյուս տեղ Նազիմ փաշա, մի պալատում՝ Աբդուլ Համիդ, անգութ ու ամբարտավան, ինչպես ցար, մյուսում՝ Նիկոլայ, մարդակեր ու արյունռուշտ, ինչպես սուլթան» («Դրօշակ», N 2, 155): Ալ. Խատիսյանի գնահատմամբ. «*Ցարական ծանր ռեժիմը հաւասարապէս կը ճնշեր բոլոր քաղաքացիները, սակայն այն աւելի ծանր էր հայերու համար: Իշխան Գոլիցինը կկարծեր, որ պետք է հայերին աւելի ուժեղ ճնշել, քանի որ անոնք աւելի կազմակերպուած ուժեղ կերեւային իր աչքին*»: (Խատիսյան Ալ., Քաղաքապետի մը յիշատակները, 69)

Հայ-թաթարական ընդհարումների պատճառների վերաբերյալ «Դրօշակ»-ի էջերում կան բազմաթիվ վերլուծություններ ու տեսակետներ:

Այն հեղինակները, որոնք անդրադարձել են ընդհարումների պատճառների վերլուծությանն ու բնութագրմանը, որպես կանոն, առավելապես ընդգծում են տնտեսական և ազգային, ինչպես նաև կրթական ու մշակութային գործոններով պայմանավորված երկու ազգերի հակադրություններն ու թշնամանքը:

Անդրադառնալով այս բախումների տնտեսական պատճառներով վերլուծությանը՝ «Դրօշակ»-ը գրում է. «… Նրանք, որոնք պնդում են, թե թուրք-հայկական ընդհարումը բացատրւում է տնտեսական պատճառներով՝ նրանք կամ քնում են խնդիրը կատարեալ անգիտութեամբ, կամ թե աշխատում են թոզ փչել աշխարհի աչքին…Բագուն մահմէդական կենտրոօն է ոչ միայն Անդրկովկասի, այլև Պարսկաստանի համար: Բագւի մահմէդականների հարստութիւնները ստեղծել են գրեթէ բացառապէս հայերի ձեռքերով, դրա պատճառը այն է, որ թուրքերը ընդհանրապէս փախչում են աշխատանքից ու ֆինանսական գործողութիւններից և գրեթէ բացառապէս դրամ են փոխ տալիս և գրաւ են դնում հողերը… Կայ և այլ հանգամանք՝ թուրքի պահանջները չեն աւելանում. Նա շարունակում է հագնել իր խալատը և ստանալ իր 20 կոպէկանոց ճաշը բազարից, իսկ թուրք մանուկները չեն յաճախում՝ նոյնիսկ երկրորդական դպրոցներ… Թուրքերը ունեն իրենց ձեռքում ամենահարուստ հողերը. Ինչ վերաբերում է Բագւի միլօնատէրերին՝ Մանթաշեանի պէս հարուստներ թուրքերի մեջ կան տասից աւելի: Այդպիսով այն առասպելը, թէ անտօգոնիզմը բացատրւում է տնտեսական պատճառներով, զուրկ է որևէ հիմքից» («Դրօշակ», N 2, 234):

Միաժամանակ, «Դրօշակ»-ը նշում է, որ տրամադիր չլինելով միանգամայն ժխտելու տնտեսական գործոնի դերը՝ այն համարում է երկրորդական կամ երրորդական պատճառներից մեկը:

Հայ-թաթարական ընդհարումների պատճառներն իր `«Միացյալ անկախ Թուրանյա» աշխատությունում անդրադարձել է նաև Զարևանդը: Նրա գնահատմամբ՝ ընդհարումների բռնկման հիմնական պատճառներից մեկը, եթե ոչ հիմնականը, Օսմանյան Թուրքիայի հետապնդած հեռահար նպատակներն էին, նրա որդեգրած պանթուրանական ծրագիրը, որն իրականացնելու համար Թուրքիային նպաստավոր, հարմար պահ էր հարկավոր: Իսկ այդ պահը նրան ընձեռում էր ռուս-ճապոնական պատերազմը, առավել ևս ռազմաճակատում ռուսական զորքերի կրած պարտություններն ու կայսրությունում բռնկված հեղափոխական շարժումները:

Զարևանդը գրում է. «Մոնղոլ հորեղբորորդին, Ճապոնի հաջողությունները թեւ տվել էին իրենց հույսերուն: Մեծ գործին հառաջաբանն էր, որ անոնք կրնային շարժորմը վերածել Ռուսիոյ դեմ ապստամբության, հակառակ պարագային «թուրք հողը» կմաքրեին անոր վրա իրավունք ունենալ հավակնող և իրենց համատարրությունը խանգարող հայեն: Անշուշտ կարգը վրացիներուն ալ պիտի գար: Բայց կարևորը նախ հայերը մաքրելն էր» (Զարևանդ 19-26):

Հայ-թուրքական ընդհարումների պատճառների վերլուծությունը ցույց է տալիս, որպանթուրանականության մասին Զարևանդի պնդումները, իրոք, ավելի քան ճիշտ են: Եթե հիմք ընդունենք այս տեսակետը, ապա պիտի նշել, որ Անդրկովկասում ծավալված ընդհարումները գործնականում պանթուրանականության առաջին դրսևորումներն էին, որոնց առաջին զոհը պիտի դառնար կովկասահայությունը:

Մինչև ընդհարումների սանձազերծումը, Պոլսից եկած հատուկ գործակալների ջանքերով Բաքվում կազմակերպվում է համաիսլամական գաղափարներ քարոզող մի կազմակերրպություն, որի նպատակն էր միավորել մահմեդականության շիա և սյունի ճյուղերն ու առաջին իսկ հնարավորության դեպքում Կովկասը մաքրել քրիստոնյաներից: Համաիսլամական քարոզիչները, հաստատվելով Բաքվում, եռանդուն գործունեություն էին ծավալում Կովկասի գրեթե բոլոր մահմեդական վայրերում և իրենց նպատակներն իրագործելու համար սպասում էին քաղաքական նպաստավոր պայմանների:

Ա. Գյուլխանդանեանը նշում է, որ այդ ընդհարումները, որոնք 2 տարի շարունակվեցին մեծ դաժանությամբ, ոչ միայն իրենց ազդեցությունը թողեցին միմյանց հետ կռվող 2 ժողովուրդների փոխհարաբերությունների վրա, այլև մեծ դեր ունեցան ամբողջ Անդրկովկասի քաղաքական կյանքի վրա, որովհետև այդ ընդհարումների ընթացքին էր, որ վերջապես ձևակերպվեցին կովկասյան 3 ժողովուրդների՝ հայերի, թաթարների և վրացիների փոխհարաբերությունները, նրանց քաղաքական ձգտումները և այն ուղիները, որոնցով այդ 3 ժողովուրդները հնարավոր էին համարում իրականացնել իրենց քաղաքական իդեալները (Գիւլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, 5):

Կարելի է ասել, որ այդ ընդհարումների շնորհիվ էր, որ սկիզբ առավ վրացիների գերազանցությունը կովկասյան ժողովուրդների քաղաքական կյանքի վրա: Օսմանյան կայսրությունում ծավալված հայկական ազատագրական պայքարը, հայկական հարցի միջազգայնացումն ու եվրոպական թերթերի անդադար անդրադարձը այս հարցերին հայությանը բերում էր միջազգային ճանաչում, որը ցարական իշխանությունը համարում էր վնասակար գործոն իր շահերի համար և այն ամեն կերպ փորձում է խոչնդոտ լինել հայության տնտեսական ու քաղաքական զարգացման գործում:

Թաթարները, որ մինչև 19-րդ դարի վերջերը անկազմակերպ կրոնական համայնք էին, 20-րդ դարի շեմքին սկսում են ազգայնորեն կազմակերպվել և իրենց հայացքները ուղղել մերթ դեպի իսլամական Պարսկաստան, մերթ Օսմանյան կայսրություն: Միաժամանակ ամուր հենարաններ էին որոնում Կովկասյան

իշխանությունների մոտ, որոնց վարած հակահայ քաղաքականությունը լիովին համընկնում էր թաթարների նկրտումներին:

Բաքվի ընդհարումներն ու հայության ինքնապաշտպանության կազմակերպումը

Հայկական կոտորածները սանձազերծվում են 1905թ. փետրվարի 6-ին համաիսլամական կենտրոն Բաքվում: Այդ ժամանակ, ըստ Ա-ԴՕ-ի տվյալների, Կովկասում բնակվում էին 1.130.000 հայեր, որից 434.000 ապրում էր Երևանում, 294.000-ը՝ Գանձակի, 219.000-ը՝ Թիֆլիսի, 73.000-ը՝ Կարսի, 50.000-ը՝ Բաքվի նահանգներում, 14.000ը՝ Բաթումիի շրջանում (Ա-ԴՕ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, 43):

Փետրվարի 6-ի երեկոյան մահմեդական զինյալ ամբոխը սկսում է կրակ բացել քաղաքի բանուկ փողոցներում, հրապարակներում և շուկաներում գտնվող հայերի վրա: Քաջալերված ռուսական իշխանությունների թողտվությամբ, ինչպես նաև հայերի անպատրաստ վիճակից՝ մահմեդական հրոսակախմբերը դիմում են ամենավայրագ միջոցների. ամենուրեք կատարում են սպանություններ, թալան և հայերին պատկանող բնակարանների ու ձեռնարկությունների հրկիզումներ:

Այս օրհասական դրության մեջ հայ ժողովրդի պաշտպանությունը ակամայից դրվում է ազգային-քաղաքական կուսակցություններ վրա և քանի որ Արմենականները հիմնականում գործում էին Վան-Վասպուրականում, իսկ 1896 թ. Վանի հանրահայտ կոտորածների ժամանակ անդառնալի կորուստներ էին կրել և Անդրկովկասում առհասարակ կառույցներ չունեին, ուստի ինքնապաշտպանության գործում որևէ լուրջ դերակատարություն ունենալ չէին կարող: Մնում էին Հնչակյան կուսակցությունն ու Հ.Յ. Դաշնակցությունը, որն այդ ժամանակահատվածում կազմակերպական կառույցներով, շարքերում ընդգրկված անդամների թվաքանակով ու փորձառությամբ և ունեցած լծակներով առավել ուժեղն էր ու ազդեցիկը: Հենց նա էլ ստանձնեց կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպման ղեկավարումը:

Դաշնակցության մի շարք գործիչներ թողեցին Արևմտյան Հայաստանը և իրենց ֆիդայիներով անցան Անդրկովկաս, ձեռնամուխ եղան հայ բնակչության պաշտպանությանը («Հայրենիք», թիւ 12,102):

1905 թ. Երևանում տեղի ունեցած ՀՅԴ Մրգաստանի կենտր. կոմիտեի շրջանային ժողովում ունեցած իր ելույթում անդրադառնալով հայ-թուրքական ընդհարումներ բնութագրմանը՝ Նիկոլ Դումանը նշում է. «…ամբողջ Կովկասը շատ աննպաստ պայմանների մեջ էր: Հայ-թուրքական յարաբերութիւները պայթեցին բոլորովին անակնկալ և սոսկալի արագությամբ, ընդունեցին ամենալայն չափերը:

…Կառավարութիւնը ակներև թուրքերին էր կողմնակից, մենք անպատրաստ, իսկ ժողովուրդը՝ ինքնապատշպանութեան անւարժ…» (ՀՅԴ ԿԱ, 2):

Հայերի դիմումը նահանգապետին՝ ինքնապաշտպանության նպատակով զենք տրամադելու կամ կոտորածը կանխելու նպատակով, մերժվում է՝ պատճառաբանելով իբր. «քաղաքում բավարար զինվորական ուժեր չկան»: «Տարօրինակ պատասխան,- ամենամեծ ցույցերի ժամանակ, նրա ունեցած ուժերը բավական են լինում երկու ժամվա մեջ ցրելու ցուցարարներին, իսկ կոտորածի ժամանակ ուժը անհետանում է» («Դրօշակ», N 3, 37):

Թվում է, թե անհնարին է եղել Բաքվի հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպումը: Քաղաքում հայերը որևէ մարտական ուժ ընդհանրապես չեն ունեցել: Բարեբախտաբար, այդ ժամանակ Բաքվում էր դաշնակցական նշանավոր գործիչ Նիկոլ Դումանը: ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն դիմում է անվանի հայդուկապետին հայ բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Վերջինս այդ ժամանակ Արշակ Ղուկասյանի նավթահանքերի կառավարիչն էր:

Դումանը Բաքվի հայության ինքնապաշտպանության կազմակերպման գործը սկսում է քաղաքում հանրահայտ Իսահակ Մելիքյանի «Ռեմբրանտ» անվանումը կրող լուսանկարչատնից, որը դառնում է նրա մարտական շտաբը:

ՀՅԴ Բաքվի կենտր. կոմիտեն, Դումանի համաձայնությամբ նույն օրը դիմելով նահանգապետին, պահանջում է դադարեցնել ջարդերը՝ միաժամանակ զգուշացնելով, որ հակառակ պարագայում ընդհարումների ողջ պատասխանատվությունը ծանրանալով իր վրա՝ կդատապարտվի մահվան: Նակաշիձեն, արհամարհելով հայերի պահանջն ու սպառնալիքը, հեծյալ թիկնազորի պաշտպանությամբ, շրջում էր քաղաքի թաղամասերով և ականատես լինում ջարդերի տեսարանների:

Բաքվում Նիկոլ Դումանի տրամադրության տակ առաջին օրը կային ընդամենը վեց կռվողներ՝ Մկրտիչ Աղամալյանը (Սարհատ), Մարտիրոս Չարուխչյանը, Հմայակ Ջանփոլադյանը, Համբարձում Բալայանը (Համբի), Փոքրիկ Ղազարը (Ղազո) և Շամխեցի Իվանը («Հայրենիք», թիւ 7, 151):

Դումանը շատ լավ գիտակցում էր, որ ստեղծված չափազանց ծանր իրավիճակում հայության փրկությունը կախված էր միմիայն պայքարի վճռականությունից ու արագ գործելուց: Հարկավոր էր կտրուկ, վճռական ընթացքով խրախուսել, մարտական ոգի ներշնչել հոռետեսության գիրկն ընկած հայությանը, հնարավոր բոլոր միջոցներն օգտագործել՝ կազմակերպելու կայուն ինքնապաշտպանական ճակատ (Գևորգյան Հ. Հայ-թաթարական ընդհարումները Հարավային Կովկասում, 256):

Առաջին հերթին անհրաժեշտ էր զենք, և Դումանը փոքրաթիվ խումբ է ուղարկում թուրքական հեռավոր թաղամասերում գտնվող զենքի գաղտնի պահեստից զենք բերելու:

Ահա այդ չնչին միջոցներով հիմք է դրվում Բաքվի ինքնապաշտպանությանը:

Փետրվարի 7-ին Դումանը մի քանի զինակիցներով գտնվում էր քաղաքում հայտնի «Ռեմբրանտ» լուսանկարչատանը, երբ թուրք զինված ամբոխը, ճանապարհին կոտորելով պատահած հայերին, հարձակվում է հայկական թաղամասերի վրա: Հապաղելը հավասարազոր էր մահվան, քանզի դիմադրության չհանդիպելով՝ թուրքերը արագորեն կարող էին ներխուժել հայոց թաղամասերը և, կտրելով հաղորդակցության ուղիները, անխնա կոտորել հայերին:

Դումանը, ճիշտ ըմբռնելով վերահաս սարսափելի վտանգը, վճռում է վեց զինակիցներով դիմավորել թուրք ամբոխին և վերջիններիս համար լիովին անսպասելի ընդառաջ է դուրս գալիս և արագ տեղաշարժեր կատարելով՝ դիպուկ հարվածներ հասցնում թուրքերին:

Դումանը իր փոքրիկ ջոկատով Բաքվի փողոցներում հրաշքներ է գործում: Գազազած ամբոխին կանգնեցնելու նպատակով՝ հրացանները ձեռքներին, վազքով անցնում են փողոցից փողոց, թաղամասից թաղամաս՝ ամենուրեք մահացու հարվածներ տեղալով թշնամու գլխին:

Այդ օրը՝ մինչև կեսօր, հայ մարտիկներին հաջողվել է արագ տեղաշարժերի և անսպասելի հարվածների շնորհիվ կանխել հայկական թաղամասերը ներխուժելու մահմեդականների ձեռնարկած փորձերը: Կեսօրից մի փոքր անց թուրք ամբոխը տարբեր ուղղություններով գրոհել է հայ մարտիկների դիրքերը:

Դումանը, ճիշտ կանխագուշակելով հարձակումների առավել հնարավոր ու վտանգավոր ուղղություններն ու հաշվի առնելով փողոցների դասավորությունը, հայ մարտիկներին դիրքավորում է ամենակարևոր ու պատասխանատու կետերում: Նրանց անկոտրում դիմադրությունը, դիպուկ հարվածները և փողոցում փռված գնդակահար թուրքերի դիակները սարսափելի ազդեցություն են գործում անակնկալի եկած ամբոխի վրա: Եվ մինչ այդ միայն անզեն մարդկանց սպանելու գործում «քաջություն» դրսևորած թուրքերը, հանդիպելով կազմակերպված դիմադրության, ահ ու սարսափի մատնված, խուճապահար դիմում են փախուստի:

Այս հանգամանքը հնարավորություն է տալիս շատ կարճ ժամանակահատվածում համալրելու իր ջոկատը և մեկը մյուսի հետևից մաքրելու հայկական թաղամասերը: Գազազած թուրք ամբոխը զայրույթից թափվում է հայկական թաղամասերի սահմաններից դուրս ապրող փոքրաթիվ հայերի վրա, որոնց հարկավոր էր անհապաղ դուրս բերել թուրքական թաղամասերից և փրկել անխուսափելի կործանումից: Դումանին հաջողվում է իրականացնել այդ անհնարին թվացող գործը:

Չնայած Նիկոլ Դումանի մարտախմբի մրրկային հակահարվածը զգաստացրեց ու ոգեշնչեց հայերին, բայց վտանգը դեռևս չէր անցել. ամեն րոպե սպասում էին թուրքերի նոր հարձակումների: Անհրաժեշտ էր խորացնել, կայունացնել ինքնապաշտպանությունը, իսկ դրա համար նախ և առաջ պետք էր զենք ձեռք բերել: Դումանին հաջողվում է կանխիկ դրամով, իսկ երբեմն էլ մահվան սպառնալիքով, համապատասխան խանութներից ձեռք բերել որոշ քանակությամբ զենք ու զինամթերք, իսկ դա դեռևս բավարար չէր: Ստեղծված իրավիճակի հրամայականն էր, որ յուրաքանչյուր հայ ինքը հոգար իր ռազմական կարիքները, քանզի Բաքվի ինքնապաշտպանության կոմիտեն չուներ անհրաժեշտ դրամ ու զենք:

Բաքվի հայկական կոտորածներին մասնակցել է ինչպես բուն քաղաքի մահմեդականությունը, այնպես էլ՝ մերձակա գյուղերի թուրքերը: «Դրօշակ»-ի հավաստմամբ՝ «Շրջակայ թիւրք գիւղերից՝ բերդաններով զինուած թիւրք խմբերը անարգել թափւում էին քաղաք, իսկ Բալախանից եկած 40-50 հայ բանւորներին կալանաւորում՝ կօզակները շրջապատում են, վերցնում են զէնքերը և վերադարձնում Բալախանի: Այս փաստը վկայում են շատ շատերը, ինչպէս հայերը, նոյնպէս և ռուսները, որոնք իրենց աչքով են տեսել» («Դրօշակ», N 3, 112):

Դումանի և իր մարտական ընկերների մարտական գործողությունները խուճապի են մատնում թուրք մոլեռանդ ամբոխին, ինչպես նաև ցարական իշխանություններին:

«Թուրք խուժանը,- նշում է Թադէ Պետրոսյանը,- հակառակ որ փառորապէս զինուած էր և վայելում էր ռուս պաշտօնեութեան հովանաւորութիւնը, թողեց հայկական թաղերը և կենտրոնացաւ Ղուրայ Մէյդանի և Շամախինկայի մէջ: Դումանի կռիւերը կրցան թուրքերին քշել իրենց իրենց անառիկ համարուած շրջաններէն, մտան թրքաշատ թաղերը, ազատեցին Դաշնակցութեան զինապահեստը, և նոր ուժեր զինելով և գրոհներ տալով՝ շշցրին ոչ միայն թուրքերին, այլև ռուս զինւորական և քաղաքացիական պաշտօնէութիւնը: Եւ երբ, Նիկոլ Դումանի հրահանգով, պիտի հանէինք նաեւ մեր ձեռնառումբերը, մեր առաջ ելան թաթար ղեկաւարները ճերմակ դրօշակներով հաշտություն, հաշտություն պոռալով խնդրեցին վերջ տալ արիւնահեղութեան»(Դրօշակ», N 3,121, «Հարենիք», թիւ 10, 18):

Հայ մարտական ուժերի հերոսական դիմադրությունը ստիպեց թուրք վերնախավին պարզել սպիտակ դրոշ և գնալ հաշտության բանակցությունների:

Բաքվի հայության փրկությունը Նիկոլ Դումանին վերագրելու իրողությունը հավաստում է նաև Աբրահամ Գյուլխանդանյանը և նրա գնահատմամբ. «Եթե Դումանը չլիներ, Բագուի ինթնապաշտպանութեան գործը կամ չէր յաջողուի կամ կը ստանար պատահական բնույթ եւ Բագուի հայութիւնը, հաւանօրէն սոսկալի կերպով կը տուժէր, առանց կարողանալու հակառակորդին արժանի պատասխան տալ: Շնորհիվ Դումանի սուր գիտակցութեան եւ վճռական կեցուացքին, մեր մարտիկները, որոնք մինչ այդ անվճռական դրութեան մէջ էին, Դումանի մի հրամանը ստանալուն պէս, դուրս եկան տատանողական հոգեկան վիճակից և բոլորուին կերպարանափոխուած՝ հերոսների պէս դիմադրիլ սկսեցին տասնապատիկ աւելի ուժերին…» (Գյուլխանդանյան 61):

Ճիշտ է, շնորհիվ հայ մարտիկների հերոսության Բաքվում շիկացած իրավիճակը խաղաղվեց, բայց պետք է իրագործվեր մի կարևորագույն խնդիր ևս:

Դաշնակցությունը այս կռիվներից հետո մահվան է դատապարտում այդ ընդհարումներումներում մեծ դեր խաղացած նահանգապետ Նակաշիձեին, ոստիկանապետ Դեմինսկուն, ոստիկանական սպա Մահմեդբեկովին և ուրիշ չորս հոգու, որոնց բոլորին էլ նամակներով տեղեկացնում է մահավճիռների մասին: Նակաշիձեն սպանվում է մայիսի 11-ին երիտասարդ դաշնակցական գործիչ Դրոյի ձեռքով: Այս փաստը մեծ ազդեցություն է գործում ինչպես թուրքերի, այնպես էլ ցարական պաշտոնյաների վրա:

«Մայիս 11-ին, ցերեկլայ 3 ժամին քաղաքի կենտրօնում ` սպանուեց իշխան Նակաշիձեն: Ռումբը արձակուեց հինգ քայլի վրայ: Նա ընկաւ նոյն փողոցներում, ուր երկու ամիս առաջ նրա բազմաթիւ զոհերի դիակներն էին թաւալում, տեսարանը սարսափեցուցիչ էր» («Դրօշակ», N 7, 118):

Այս իրադարձությունից հետո Նախիջևան ժամանած Երևանի փոխնահանգապետը ժողովի է հրավիրում հայ և թուրք ազդեցիկ դեմքերին: Վերջինս խաղաղության կոչերի փոխարեն սպառնալիքների տեղում հայերի կողմը ասելով. *«Ռուս պետությունը չի կրնար Հայերու ձգտումներուն հանդուրժել, այդ պատճառով ալ հայերը արժանի են խստագույն պատիժներու: Դառնալով թուրք բէկերուն՝ կոչ ըրած է այնպես դաս տալ հայերունուն, որն յաւիտեան չմոռնան: Ի վերջոյ հայհոյելով, հայերը վռնտած են ժողովէն»: (ՀՅԴ ԿԱ, թ. 293, գ. 10, էջ 1):*

Բաքվի իրադարձություններն ու Կովկասում ստեղծված ծանր մթնոլորտը պարզորոշ վկայում էին կովկասահայությանը սպառնացող վտանգների մասին և նրանց ինքնապաշտպանության կազմակերպումը դառնում է օրվա հրամայական:

Բաքվում կայացած խորհրդաժողովում որոշվում է ՀՅԴ կենտրոնական կոմիտեին կից ստեղծել Զինվորական Մարմին, որը պետք է զբաղվեր միմիայն ինքնապաշտպանության կազմակերպման և մարտերը վարելուն առնչվող խնդիրներով:

Համաձայն խորհրդաժողովում կայացրած որոշման՝ Զինվորական Մարմինը.

1. Պարտավոր էր հետևել հակառակորդի գործողություններին և զբաղվեր զենք ու զինամթերքի հայթայթման և մարտական խմբերի կազմավորման աշխատանքներով: Ընդ որում, այդ ընթացքում Զինվորական Մարմինը հաշվետու էր և ենթակա կենտրոնական կոմիտեին:

2. Կռիվների ծավալման պարագայում Զինվորական Մարմինը օժտվելու էր առավելագույն ինքնուրույնությամբ և պատասխանատվությամբ: «Այդ ժամանակ Կ. Կոմիտէն դառնում էր Զինուորական Մարմնի աջակից՝ դնելով վերջինիս տրամադրության տակ իր բովանդակ նիւթական և բարոյական ուժերը:

Զինուորական Մարմինն էր, որ դառնում էր պատասխանատու կռիւներ ամբողջ ընթացքին: Նա իրավունք ունէր ընտրել հրամանատար, վարել բոլոր կռիւները մինչև հաշտութիւն: Հաշտութիւնը կայանալուց յետոյ, Զինուորական Մարմինը մտնում էր իր նախկին դերի մէջ և դառնում էր հաշուետու և պատասխանատու Կ. Կոմիտէի առաջ» («Դրօշակ», N 2, 129):

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում արձանագրենք, որ 1905-1906 թթ. Հայ-թաթարական ընդհարումները, որոնք հրահրվեցին ցարական կառավարության կողմից Կովկասը հեղափոխական շարժումներից հեռու պահելու նպատակով, սկիզբ են առնում Բաքվում, այնուհետև շարունակվում են Երևանում ու Նախիջևանում: Սակայն հենց Բաքվում սկիզբ դրված հաջող ինքնաշատպանությունը ոգևորիչ նախադեպ է դառնում՝ Երևանում ու Նախիջևանում նույնպիսի ինքնապաշպանություն կազմակերպելու համար: Անգնահատելի է դաշնակցական գործիչ Նիկոլ Դումանի դերը այս գործում. հենց նրա հրամանատարական տաղանդի ու իրադրությանը ճիշտ ու արագ արձագանքելու շնորհիվ Բաքվում հնարավոր է լինում խուսափել հայության զանգվածային

կոտորածից և հաղթանակած դուրս գալ հայությանը պարտադրված արյունալի բախումներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա-ԴՕ, *Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.) (Փաստական վիճակագրական տեղագրական լուսաբանություններով),* Երևան, 1907:
2. Գյուլխանդանյան Աբրահամ, *Հայ-թաթարական ընդհարումները,* հ. 1, Փարիզ, 1933:
3. Գևորգյան Համլետ, *Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից,* Երևան, 2012:
4. Գևորգյան Համլետ, *Հայ-թուրքական ընդհարումները Հարավային Կովկասում*, Երևան, 2019:
5. «Դրօշակ», N 3,N 4, N 7, 1905, N 2, 1906:
6. Զարևանդ, *Միացյալ անկախ Թուրանիա,* Երևան, 1993:
7. Խատիսյան Ալեքսանդր, *Քաղաքապետի մը յիշատակները,* Պէյրութ, 1991:
8. Համբարյան Ազատ, *Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.),* Երևան, 1999:
9. «Հայրենիք», թիւ 12, 1923, թիւ 7, 1931, թիւ 10, 1951:
10. ՀՅԴ ԿԱ, *թծ. 294, գ. 24 ա, թծ. 293, գ. 10:*
11. Չորմիսեան Լեւոն, *Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան,* հ. Բ, Պէյրութ, 1974:
12. Վարանդեան Միքայել, *Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմություն,* Երևան, 1992:

WORKS CITED

1. A-DO', Hay-t'urqakan y'ndharumy' Kovkasum (1905-1906 t't'.) (P'astakan vitwakagrakan teghagrakan lusabanut'yunnerov), Erevan, 1907 [A-DO, the Armenian-Turkish Conflict in the Caucasus (1905-1906) (with actual statistical topographic coverage), Yerevan], 1907. (in Armenian)
2. HYD KA, t'c'. 294, g. 24 a, t'c'. 293, g. 10 [Central Archive of the Dashnakcutyun Party, folder 294, c 24 a, folder 293, c. 10]. (in Armenian)
3. Chormisean Lewon, Hamapatker arevmtahayoc me'k daru patmut'ean, h. B, Pe'yrut'[Overview of a Century of History of Western Armenians, p. B, Beirut], 1974. (in Armenian)
4. “Droshak”, N 3, N 4, N 7, 1905, N 2, 1906. (in Armenian)
5. Gevorgyan Hamlet, Hay-t'urqakan y'ndharumnery' Haravayin Kovkasum, Erevan, [Armenian-Turkish Conflicts in the South Caucasus, Yerevan], 2019. (in Armenian)
6. Gevorgyan Hamlet, Azatagrakan payqari r'azmavarut'yuny' ev e'jer nra herosapatumic, Erevan, [The Strategy of the Liberation Struggle and Pages from his Heroism, Yerevan], 2012. (in Armenian)
7. Gyulxandanyan Abraham, Hay-t'at'arakan y'ndharumnery', h. 1, P'ariz, 1933, [Armenian-Tatar Conflicts, no.1, Paris], 1993. (in Armenian)
8. Hambaryan Azat, Azatagrakan sharjhumnery' Arevmtyan Hayastanum (1898-1908 t't'.), Erevan [Liberation Movements in Western Armenia (1898-1908), Yerevan], 1999. (in Armenian)
9. “Hayreniq”, N 12, 1923, N 7, 1931, N 10, 1956. (in Armenian)
10. Xatisyan Aleqsandr, Qaghaqapeti my' yishataknery', Pe'yrut' [Memoirs of a Mayor, Beirut], 1991. (in Armenian)
11. Zarevand, Miacyal ankax T'urania, Erevan, [United independent Turania, Yerevan], 1993. (in Armenian)

12. Varandean Miqayel, Hay Yeghap'oxakan Dashnakcut'yan patmut'yun, Erevan, [History of the Party Dashnakcutyun, Yerevan], 1992. (in Armenian)

ARMENIAN-TATAR CLASHES AND THE ORGANIZATION OF SELF-DEFENSE OF BAKU ARMENIANS ACCORDING TO «DROSHAK» PUBLICATION

KARINE HOVSEPYAN
Yerevan State University, Department of History
Armenian history chair, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

This article is intended to examine in a new light the deep causes of the Armenian-Tatar conflicts of 1905, the circumstances and complications of organizing self-defense of the Armenians, according to the newspaper ‘’Droshak’’.

The task of the article is to provide an expert analysis of the true causes of the Armenian-Tatar conflict of 1905, the efforts made by its main organizing force - the Tsarist authorities, as well as the brilliant self-defense organized by Dashnaktsutyun, based on the abundant information of "Droshak" publication and comparing it with the works of other authors.

The work is outlined on the basis of a comprehensive study of the facts, using the principles of historical analysis.

As a result of this study, it can be stated that the Armenian-Tatar clashes provoked by the Tsarist government in 1905-1906 had both political and economic motives and far-sighted goals, but due to proper self-defense and decisive offensive actions organized by Dashnaktsutyun, these clashes stopped throughout the Caucasus. It is an undeniable fact that the Tsarist government, by fomenting interethnic conflicts in the Caucasus region, aimed to keep them away from the revolutionary movements pursuing the empire, and to extract from these clashes as many economic and political benefits as possible. However, the Armenian people managed to emerge victorious in these clashes, as the organization of resistance was taken over by Dashnaktsutyun, which, with the opening of the "Caucasian Front" in 1904, also took over the Self-Defense Cause of Eastern Armenians.

Keywords: *Conflicts, «Droshak», Dashnakanfigures, NikolDuman, Baqu, self-defense, tatar crowd, tsarist government.*

АРМЯНО-ТАТАРСКИЕ СТОЛКНОВЕНИЯ И ОРГАНИЗАЦИЯ САМООБОРОНЫ АРМЯН В БАКУ ПО ДАННЫМ ЖУРНАЛА «ДРОШАК»

КАРИНЕ ОВСЕПЯН
соискатель кафедры истории Армении
факультета истории
Ереванского государственного университета,
Ереван, Республика Армения

Целью данной статьи является по данным журнала «Дрошак» и под новым углом зрения изучить глубинные истоки причин армяно-татарских конфликтов 1905 года и обстоятельства и проблемы организации самообороны армян.

Главная задача исследования – экспертный анализ реальных причин армяно-татарского конфликта 1905 года, анализ действий его главной организаторской силы, российского царского правительства, а также изучение деталей исключительно организованной партией «Дашнакцутюн» самообороны армян на основе обширной информации журнала «Дрошак» и сравнения ее содержания с работами других авторов. Исследование проведено на основе комплексного изучения фактов, с использованием принципов исторического анализа.

По итогам исследования можно утверждать, что армяно-татарские столкновения в 1905-1906 годах, инициированные русским царским правительством, имели как политическую, так и экономическую мотивацию и далеко идущие цели, но благодаря грамотно организованной самообороне и решительным наступательным действиям, руководимым партией «Дашнакцутюн», эти столкновения затухли по всему Кавказу.

Неоспоримым фактом является то, что царское правительство, провоцируя этнические конфликты в Кавказском регионе, намеревалось изолировать его от революционных движений, захвативших Российскую империю, и получить как можно больше экономических и политических выгод от этих конфликтов. Но и из этих обстоятельств армянскому народу удалось выйти победителем, поскольку партия «Дашнакцутюн», которая с открытием «Кавказского фронта» в 1904 году взяла на себя организацию самообороны восточных армян.

Ключевые слова*: столкновения, «Дрошак», деятели Дашнакцутюн, Никол Думан, Баку, самооборона, татарская толпа, царское правительство.*